

ԱՇՈՏ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐԵՎԸ ՄԼԱՑՈՂՆԵՐԻՆ

ԵՐԵՎԱՆ



2016

ՀՏԴ 821.19-32 Մելիքյան
ԳՄԴ 84 (5Հ)-44
Մ 490

Մելիքյան Աշոտ
Մ 490 Արևը մնացողներին: Պատմվածքներ / Ա. Մելիքյան.-
Եր.,: Արմավ, 2016.- 48 էջ:

ՀՏԴ 821.19-32 Մելիքյան
ԳՄԴ 84 (5Հ)-44

ISBN 978-9939-863-48-1

© Մելիքյան Աշոտ, 2016
© Արմավ, 2016

Նվիրում եմ զարմուհուս՝
Ռիտա-Հայաստան Վարդանյանին

*Հայրդ, ձերոնք՝ Հայաստան,
Մայրս Ռիտա կոչեց քեզ,
Դու միշտ թանկ ես մեզ համար
Ինչ անուն էլ որ կրես...*

ՈՒՇԱՑԱԾ ՍԿԻՉԲ

...եվ մուսաները երբեք-երբեք չպետք է լռեն:

1

Դպրոցում մաթեմատիկայից միշտ էլ թույլ եմ եղել, իսկ ահա հայոց լեզվի ու գրականության ուսուցիչս՝ ամերիկահայ Անդրանիկ Մարտիկյանը, իմ հասցեին միշտ հիացական արտահայտություններ էր անում՝ «իմ փոետը, իմ գրականագետը»:

Միջնակարգն ավարտեցինք ու դարձանք դիմորդ:

Աշակերտ-աշակերտուհիներից շատերն ընտրել էին Պոլիտեխնիկը: Ես էլ նրանց միացա այն դեպքում, երբ իմ տեղը բանասիրականն էր:

Պատանեկան ռոմանտի՞զմ, բախտի չար կատա՞կ, թե՛... Ինչևիցե, արդեն քայլն արված էր, մնում էր նրա դառը պտուղները քաղել:

Մինչև ծառայության մեկնելը հաշված օրեր էին մնացել, և նոր ծրագրեր կազմելն այլևս անիմաստ էր:

2

Մի օր էլ փոշոտ ու հոգնած տունն եմ գալիս և ...

Մայրս լուռ հաց դրեց դեմս: Քիչ անց, երբ արդեն հանգստացել ու խաղաղվել էի, նկատեցի կրակին դրված, մի քանի օր առաջ աղած, կարագի խոշոր կաթսան:

Մեր տարիքի մարդիկ լավ են հիշում, թե հայ կնոջ համար ինչ ասել է յուր հալել: Մի ամբողջ արարողակարգ:

Կարոտախտով չեմ տառապում, բայց չհիշել արդար յուրի համն ու հոտը, մորս աղիջից պատրաստած համեղ բաղարջները, չեմ կարող:

Բայց այդ օրը մայրս նման չէր իրեն. երեկվա ուրախ տրամադրությունից հետք էլ չէր մնացել:

Հայրս, տարակուսանքս նկատելով, ասաց.

- Զինկոմից պավեսկա է էկե, քեզի բանակ ա կտանին:

Բոլոր հարցերը կարծես միանգամից լուծվեցին:

3

Ծառայության երկար ու ձիգ երեք տարիներ...

Անասելի դանդաղ ու դժվար էին անցնում օրերը: Պետք էր գոնե ինչ-որ բանով զբաղվել:

Գրադարանից՝ Իրինայից, գիրք եմ վերցնում, կարդում եմ, հետո էլ հանգստանալու համար զինվորական պարզ, հասարակ ծրարների նկարներ եմ խզբզում (Աստված ինձ այդ շնորհն էլ էր տվել):

Մի օր էլ նկարազարդած ծրարները նկատեց հրամանատարի քաղաքական գծով տեղակալը՝ փոխգնդապետ Վլադիմիր Չախարովը ու ... դարձա գորամասի նկարիչը:

Մտտեցավ Նոր տարին, և բոլոր վաշտերում փոքրիշատե ընդունակ տղաները պատի թերթեր պատրաստեցին:

Ճշմարտության դեմ մեղանչած չլինելու համար պետք է ասեմ, որ բոլոր թերթերն էլ գեղեցիկ էին ստացվել: Բայց ի զարմանս և հուրախություն ինձ, նրանցից իմը միայն ճանաչվեց լավագույնը և ստացա առաջին պատվոգիրը:

Իրինա Մաքսիմովնան երեսունին մոտ, հաճելի դիմագծերով, միջահասակ կին էր: Արհեստանոցն ու նրա գրադարանը միմյանցից բաժանված էին բարակ միջնորմով, և հաճախ ինձ լսելի էին լինում գրադարան այցելողների խոսակցությունները:

Իրինան արհեստանոց էր գալիս՝ տեսնելու իմ նոր աշխատանքները, ես էլ գրադարան էի մտնում հերթական գիրքը փոխելու համար: Մտերիմ հարևաններ էինք դարձել:

4

Անցան երկար ու ձիգ երեք տարիները:

Չորացրվեցի և տուն վերադարձա: Հայրս իր վերջին օրերն էր ապրում և անկողնուն գանված լինելով մի անգամ էլ ինձ տեսնելու կարոտն էր նրան պահել և ուժ տվել:

Հորս մահից հետո ինձ համար օրվա հրամայական դարձավ աշխատանք գտնելը:

Նկարի հարցում կարծես ուշացած լինեի, բոլոր տեղերը զբաղված էին:

Մուսաս հեռավոր ազգականի նման երբեմն-երբեմն այցելում էր ինձ, մի երկու բան թողնում ու նորից հեռանում էր, ինչին, առօրյա հոգսերի մեջ թաղված լինելով, ես այնքան էլ կարևորություն չէի տալիս:

Աշուտ Մեկիբյան

Բայց մի օր էլ թռչակառու ծերունուս կյանք մեկընդմիջտ ներխուժեց պատանեկան ավյունով լցված մուսաս և ձեռքիցս քաշելով՝ տարավ իր հետևից:

5

Հանգամանքների բերումով Գառնիկ Սարգսյանի մոտ՝ «Ցայգ» հեռուստաընկերությունում եմ:

Զրույցի ընթացքում Գառնիկը, իմ գրական ունակությունները նկատելով, առաջարկում է, որ գնամ գրողների միության Ծիրակի բաժանմունք: Տեսնելով համաձայնում եմ, անմիջապես զանգում է Կարապետյանին:

-Թող գա, կսպասեմ,- լինում է պատասխանը:

Աշխատում եմ ընկերներ առաջ լինել այնտեղ: Հենց դռների մեջ հանդիպում եմ բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանին, բարևում ենք և՝

-Կարդա այն, ինչ կարդացել ես Գառնիկի մոտ:

Ես, փոքր-ինչ հուզված, մի անգամ էլ եմ կարդում նույն քառատողը:

*Հրդեհվել է երկինքը,
Արևը հուր է մաղում,
Ծողջողում է գերանդին,
Հայրս ոսկի է քաղում:*

Լսելուց հետո՝ դու բանաստեղծ ես ասելով հեռախոսահամար է տալիս, և մենք բաժանվում ենք:

Նման գնահատականի արժանանալով ես, բնական է, շոյվում ու փորձում եմ, ավելի ճիշտ, որոշում եմ, անպայման շարունակել գրելը...

6

Լենինականի քաղաքային կապի հանգույց, ապահովագրական բաժին:

Ահա տևական փնտրտուքներիս վերջնակետը, որտեղ էլ անցավ երիտասարդությունս, կյանքս:

2009թ.

ԱՐՅՈՒՆՈՏ ՀՈՒՆՁՔ

Կենդանի վկան եմ մորս պատմածի

Հայրս մշեցի էր, 1915-ի փախեցիվախի տարիներին էր հասել այստեղ: Նրա մասին խոսելիս ասում էին՝ գաղթական Միսակը:

Մայրս Սևանի կողմից էր, Մարտունու շրջանի Ձորագյուղ գյուղից: Թվում է՝ եղեռնագործությունը պետք է մորս կողքով անցած լիներ, բայց ոչ:

Թուրքը մոլախոտի նման ամենուր էր, և ամենուր թուրքը թուրք էր:

*նահատակված պապիս
և քեռուս հիշատակին*

*Հոր և մինուձար որդու
Նշխարներն են ամփոփված
Գյուղի խոնարհված վանքի
Կիսականգուն պատի տակ:*

*Նրանք զոհ են գնացել
Ղաչաղ թուրքերի սրին,
Որ գողացել տարել են
Սայլին բարձած ցորենն ու
Սայլը քաշող եզներին:*

*Քստմնելի մի նախձիր,
Գործած օրը ցերեկով,
Որի հանդեպ ինչպես միշտ
Աչք է փակել, լուել է
Ժամանակը հանցավոր:*

Աշուտ Մեկիբյան

1

Դեպքը կատարվել է 1920-ի հուլիսյան մի օր:

Պապս՝ Կարապետը, քնելուց առաջ պատվիրել է կնոջը. «Լուսուն շուտ ըմեն բան կհագրիս ու կծինիս, օր էրթանք իմ Յոլակի հետ մըր ջոջ արտ քաղինք»:

Յոլակը Կարապետի մինուծար որդին էր, որ հագիվ 13-14 տարեկան կլիներ:

Շուտ են քնում, որ շուտ էլ վեր կենան ու արագ տեղ հասնեն:

Մեծ արտը գյուղից հեռու էր ընկած մի քանի վերստով:

Խառը ժամանակներ էին: Վտանգը միշտ աչքի առաջն ունենալով, հույսը Աստծուն դրած՝ հայր ու որդի վերցնում են գերանդիները, փոցխ ու եղան, հաց, եզները լծում են սայլին, որ գնան:

Տաստ, որ երեկոյան ամեն ինչ պատրաստել, դրել էր, ընդառաջ է գնում ամուսնուն և խնդրում, աղաչում է.

-Մի՛ գացեք, Կարապետ ջան, գիշեր գեշ էրած իմ տեսե: Իմ քոռ լուսու էրած լե իմալ օր պավեսկա էղնի: Մի՛ գացեք, ըսոր պզտիկ արտ քաղեք, չուրի տենանք ինչ կեղնի, Աստված ի՞նչ կկամենա: Կարապետ, քո ոտ պագիմ, լսա՛ ընծի, քզի ու էս քորփին փորձանքի մի բիր...

- Ըսիր պրծա՛ր, Էղսո՛, դը ճամփուց ետ քաշվի ու իմ խաչ իմ երեսից մի՛ թոցու, գնա՛:

Եղիսաբեթը տուն է դառնուն՝ ահը սրտում: Սպասում է, մինչև վանականը գա:

...Գնում, երկու զոյգ մոմ է վառում, աղոթում, որ ամուսնուն ու իր որդուն փորձանքից հեռու պահի. «Սո՛ւրբ Կարապետ ջան, քու աչք վըր իմ Կարապետին ու վըր Յոլակին էղնի, հասնիս-փրկիս ըդ անմեղներուն»:

2

Հայր ու որդի մինչև կեսօր հնձում են, ապա նստում են հացի: Ուտելուց ու մի փոքր հանգստանալուց հետո նորից սկսում են հնձել, որ հասցնեն մինչև արևամուտ հունձքն ավարտել:

Իր արտից տուն դարձող համագյուղացին, հասնելով նրանց, զրույցի է բռնվում հետները, և Յոլակից գերանդին վերցնելով՝ մի քիչ

էլ ինքն է հնձում՝ հնարավորություն տալով տղային հանգստանալու:

Չեմ հիշում՝ գյուղացին երբ և ինչպես է հեռացել արտից, բայց եղեռնական մահվան բոթը նա է գյուղ հասցրել:

...Մարդիկ են երևում: Երբ մոտենում են, պարզվում է՝ դաչաղ թուրքեր են: Թուրքերը զինված են եղել «խենջար»-ներով: Նրանցից մեկը պապիս հրամայում է, որ արագ, անմիջապես ցորենը բարձեն սայլին:

Պապս անկարող կատարում է հրամանը:

Վերջացնում, սայլին են լծում զույգ եզները, որից հետո մյուս դաչաղը ոտքի հարվածով գետին է տապալում նախ Յոլակին, ապա Կարապետին: Հանում են «խենջար»-ները, նրանցից մեկը մոտենում է Յոլակին: Պապս թուրքերին խնդրում է, որ առաջ իրեն, հետո... Ապարդյուն:

Առաջ Յոլակին, հետո նոր Կարապետին դաշունահարելով՝ բարձած սայլը երկու եզներով քշում են հարևան գյուղ, որտեղից եկել էին:

3

Սկսում է մթնել: Եղիսաբեթ տատս, մայրս և իր քույր Ծովինարը, աչքները ձամփի, սպասում են Յոլակին ու Կարապետին:

Մինչ մահվան բոթը տեղ կհասներ, անբացատրելի մի բան է կատարվում:

Տատս, որ մի բարի, աստվածավախ կին էր, պարզ, հստակ լսում է զայրացած ամուսնու կենդանի ձայնը:

-Ախչի, դուռ բաց է, օր դուռ կզարգիմ, օր ձեն կիտամ, չըս լսի՞:

Տատս անմիջապես գնում է դեպի դուռը, և... Կարապետը չկար:

Անցնում է ժամանակ: Հետո չարագույժ բոթը:

...Ամենեղ նահատակների աշյունները հողին են հանձնում գյուղի Սուրբ Կարապետ վանքի՝ արևին նայող պատի տակ:

4

Մայրս ամեն անգամ վերհիշելիս հարցնում էր ինձ.

-Ում՞ն՞դ ջան, ում՞ն՞դ, կըսիս՝ էդ բոլշևիկներ եփին էկե,- և արդեն պատասխանի չսպասելով, շարուանակում էր,- մե քանի ամիս լե շուտ իգեն...

ՀԱՅՐՍ

Դաժան եղեռնի իրական վկան

Հայրս մշեցի էր: Եղեռնից մազապուրծ, գաղթի ճանապարհին կորցնելով հարազատներից շատերին՝ եկել հասել էր Ձորագյուղ:

Մորս հարուստ ու շեն տունը կորցրել էր իր երբեմնի համբավը այն բանից հետո, երբ արյունախում ղաչաղ թուրքերը սպանել էին պապիս ու մորեղբորս:

Առանց տղամարդու դժվար էր տուն պահել-կառավարելը, և այս իրողությունը հաշվի առնելով՝ մայրս Միսակին մշակության է վերցնում: Ժամանակի ընթացքում, մոտիկից միմյանց ձանաչելով ու հասկանալով, սիրահարվում ու ամուսնանում են:

Գաղթի ճանապարհին էին մնացել տատս, պապս, հորս երկու եղբայրները:

Հորս երեք մերձավոր բարեկամներ հաստատվել էին Լենինականում, այդ մասին իմանալով՝ հայրս էլ է որոշում գալ Լենինական, միանալ իր երամին:

Որպես սևագործ բանվոր՝ աշխատանքի է տեղավորվում երկաթգծում:

Ծանր, հոգնեցուցիչ աշխատանք և չնչին աշխատավարձ. քանի՜ քանի՜ ծանր մուրձեր, լինգեր ու բահեր է տեղափոխել կիլոմետրերով:

Երբ սկսվում է քառասունմեկի պատերազմը, հորս տեղափոխում են ուրիշ աշխատանքի՝ գծանցի պահակի:

Պահակատանը մոտիկ նրան փոքրիկ մի հողակտոր են տրամադրում: Հայրս հմուտ հողագործ էր, որ սովորել-ժառանգել էր իր հորից, նաև լավ արհեստագործ էր: Հողի հետ զբաղվելով, ցանել-խնամելով՝ թվում էր՝ մոռանար պիտի իր եղբայրներին, հորն ու մորը, հայրական տունը: Կմոռացվե՞ր:

Հողակտորը դարձավ մեր ապրուստի հիմնական միջոցը:

Հայրս շատ չէր խոսում կորուստների ու կորցրած հարազատների

մասին: Երբ մեր տուն էին գալիս նրա բարեկամները, հայրս մեզ՝ երեխաներիս, ուղարկում էր՝ դրսում խաղալու, դասերով զբաղվելու:

Չնայած հորս այդ զգուշավորությանը մի անգամ, պատահմամբ նկատեցի, որ նա արտասվում է, տեսա արցունքը և ամեն ինչ հասկացա: Հասկացա, որ հայրս տանջվում է հոգեպես՝ իր մեջ խեղդելով կորստի ահավոր ցավը, ցավը՝ կորցրած էրգրի, տան ու հարազատների:

Եղեռնի պատկերավոր կերպարը իմ մեջ տպավորվեց այդ ուժեղ տղամարդու դաժան լացով, հասկացա եղեռն ապրածներին և...

Հորս արցունքը վերք դարձավ սրտիս:

ՀՈՒՇԵՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ

ԺԼԱՏ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Բաղդադի խուրմա ասելիս մեջս մի առանձնակի հուշ է արթնանում, որը անմիջապես առնչվում է այս պատմությանը:

Հայրս այդ օրը չէր հերթապահում, և մենք ընտանիքով միասին էինք: Մեզանից յուրաքանչյուրն զբաղված էր իր գործով:

Ես լուռ Թումանյան էի կարդում: Ութս նոր էր լրացել:

Դրսում ձյուն էր գալիս, ու ես որոշեցի կտրվել գրքից, դուրս ելնել խաղալու:

Ժամանակ անց ինձ մոտեցավ բարձրահասակ, հաղթանդամ մի տղամարդ և հարցրեց, թե տանը ով կա: Ասացի, որ բոլորն էլ տանն են, և շտապեցի այդ մասին հայտնել ծնողներին: Հայրս ինձ հետ դուրս ելավ, տեսավ անձանոթին և ասաց.

- Ի՞նչ ա գուզիք, ձգի ի՞նչ ա պետք:

Տղամարդն ուսից իջեցրել էր իր ահագին պարկը և գետնին՝ ձյան վրա դրած, հանգստանում էր: Խոսում էր մի տեսակ կտորատված հայերենով:

- Այս ապրանքը գիշերը կպահե՞ք, առավոտյան տանելու եմ վաճառելու:

Առանց համաձայնություն առնելու պարկը քարշ տվեց միջանցք:

- Բաղդդը ու խուրմա է,- ավելացրեց նա ու բարի գիշեր մաղթելով՝ գնաց:

Երբ հեռանալուց հետո մենք՝ երեխաներս, հավաքվեցինք մորս շուրջը ու հարցերի տարափով հոգնեցրինք նրան:

- Դը խուրմեն իմալ օր փշատ, փշատի պես ա, քաղցր, կուտ լե փշատի կտից չը ջոկվի: Լուսուն էդ մարդ օր էկավ, իմալ էղնի, ձգիկ բաժին կիտա, կուտիք, կտենաք:

...Թակոցների ձայնից արթնացանք: Նա էր, եկել էր՝ խուրման տա-

նելու: Պարկը միջանցքից դուրս հանեց, դրեց ուսին ու գնաց: Չեմ հիշում՝ գնալիս շնորհակալություն էլ հայտնեց, թե ոչ:

Տիրեց ծանր, դառը լռություն, և երկար ժամանակ ոչ մեկս չէինք համարձակվում խախտել այն...

- Իմ ծուռ խելք, բուռ մի հանենք, տենք իմ քրոփեքներուն, խուրմեն հո չըր հաշվե, լցե մեշոկ,- հոգոց հանեց մայրս:

ՀՅՈՒՐՆ ԱՍՏԾՈՒՆՆ Է

1

Նոր էինք տեղափոխվել Լենինական, երբ շատ չանցած՝ սկսվեց Մեծ հայրենականը՝ իր հետ բերելով դժվարություններ ու հոգսեր:

Մոլեգնող պատերազմը խախտում էր կյանքի ու իրան ու նրա բնականոն ընթացքը:

Այն առաջինը հարվածեց մեզ ու հազարավոր մեզնմաններին:

Ցուրտ, խավար, համատարած սով, հատած ծառեր, թալան, որ իր հետ բերեց պատերազմը, որի ձիրաններում տնքում էին երկիրը, մարդը:

Կյանքը կաթվածահար էր եղել:

Հինգ հոգի էինք՝ ծնողներս ու երեք անչափահասներ: Չորրորդը՝ փոքրիկ քույրս, մահացել էր երկուսուկես տարեկանում՝ չդիմանալով ցրտին ու քաղցին:

Հայրս տան միակ աշխատողն էր՝ չնչին աշխատավարձով: Երկաթուղային էր, գծանցի պահակ:

Նրան ռազմաձակատ չուղարկեցին, քանի որ երկաթուղին ինքը հենց ռազմաձակատ էր, և այն պահպանողներ էին պետք:

...Այդ գիշեր հայրս հերթափոխի պիտի գնար, բայց դեռ ժամանակ ուներ և բակի ձյունն էր մաքրում: Նրա կողքին մայրս էր:

2

Քառասունչորսի դեկտեմբերյան ցուրտ ու խավար մի օր էր, ավելի ձիշտ, մի ուշ երեկո, երբ ծնողներիս մոտեցավ քուրջերի մեջ կուլոված, ոտքերին փալասի կտորներ փաթաթած, միջին տարիքի, վտիտ մի կին: Ձեռքին մի փոքրիկ տոպրակ ուներ պահած: Պարզվեց՝ կինը մուրացիկ էր և գիշերելու համար մի անկյուն էր խնդրում:

Մայրս տարակուսանքով զննեց ուրվական հիշեցնող թշվառականին, ապա ամուսնուց թույլտվություն ստանալով՝ տուն հրավիրեցին նրան՝ ասելով՝ «խոնախն Ասուն ա»:

Ներս մտնելուն պես կինը վայր դրեց ձեռքի տոպրակն ու անմիջապես մոտեցավ վառարանին՝ ոտքերն ու ձեռքերը տաքացնելու:

-Աստված ձեր տուն շեն պահա, ձեզի անփորձանք պահա, առողջութեն ու աջողում տա բոլորիդ, շատ-շատ շնորհակալ իմ, օր ընծի ներս առուք:

Ու այսպես շուտ-շուտ օրինում էր մեզ, միաժամանակ էլ պատմում իր մասին:

Մերոնք էլ նրան մի փոքր հարց ու փորձ արեցին ու արագ մտերմացան:

Մայրս սուփրա փոեց՝ ասելով՝ քուրո՛ ջան, տաք ջրից սավաի բան չունիմ քզի տալու և ջրով լի թեյնիկը դրեց կրակին: Երբ ջուրը եռաց, մայրս մի քիչ հացի փշրանք այրեց-սևացրեց վառարանին, և... թեյն արդեն պատրաստ էր:

Կինը կարծես աշխուժացավ և «Աստված մեծ է և ողորմած» ասելով՝ սուփրային դատարկեց իր տոպարկի ողջ պարունակությունը՝ ահագին հաց, մի քիչ լոռ, սառած խնձորներ, մի քանի շաքար և... մի բուռ կարամելներ:

Մեր ուրախությանը այլևս չափ չկար: Մեզ՝ հատկապես երեխաներիս համար այդ օրը կարծես տոն լիներ:

Հայրս արդեն աշխատանքի էր գնացել:

3

Մենք այդ օրը սովորականից ուշ պառկեցինք քնելու: Քնից առավոտյան ուշ էլ արթնացանք: Այն բարեհոգի հրեշտակը՝ Աստծո ղոնաղը, բոլորիս մեկ անգամ ևս օրհնել, շնորհակալություն էր հայտնել հյուրընկալության համար ու գնացել էր:

Գնացել էր՝ բոլորիս հոգիներում լուսավոր հետք թողած:

Երբ հայրս գործից տուն եկավ, մայրս նրան պատմեց մուրացկանի լիասրտության ու կամեցողության մասին:

-Միսանկ,- հորս դիմելով՝ ասաց մայրս,- մենք էդ կնկան լավութե՞ն էրինք, թե՞ Աստված էր նրան ուղարկել իմ էրեխեքներու համար...

ՄԵՐ ԲՈՍՏԱՆԸ ՊԱՏՄԱՇԱՐԻՑ

ՑԼԱՎԱԶՔ

-Այո՛, այո՛, ցլավազք, և ոչ թե ցլամարտ:

Հայրս այդ օրը չէր աշխատում, բայց դա ինձ չխանգարեց՝ բոստան գնամ հսկելու, որ երեխաներն ու կենդանիները չմտնեն դեռ նախորդ գիշեր ջրած հողակտորն ու վնաս չպատճառեն արդեն հասունացող բերքին:

Օգոստոսին էր, շոգ: Յոթերորդ էի փոխադրվել և դպրոցական արձակուրդներն անցկացնում էի գլխավորապես արտում կամ բոստանում:

Ձմռանը ձնահյուսքից երկաթուղագիծը պաշտպանելու նպատակով գծի երկայնքով եռաշերտ ծառեր էին տնկված: Նրանցից մեկի՝ մի փշատենու մոտ կանգնած նայում էի գծանցի պահակատանը:

Մտազբաղ, դանդաղ սկսեցի քայլել՝ տեսնելու, թե որքանով է հաջող եղել գիշերվա ջրտուփը, մարգերում պատահմամբ հողը հո չոր չի՞ մնացել, երբ չգիտեմ որտեղից և ինչպես մի անկոչ ցուլ հայտնվեց ու սկսեց տորրել թաց մարգերն ու հողի, բնության պարզևած բարիքները:

Այս հսկան իրեն շատ հանգիստ էր պահում, և ես կարծում էի, որ նրանից վախենալու հիմքեր չպիտի ունենամ: Այդ մտադրությամբ էլ վերցրի մի քար և այն է պատրաստվում էի հարվածել...

Ցուլը կատաղեց ու սարսափելի գոռոցով ընկավ իմ հետևից: Ես լարեցի ողջ ուժերս ու գծի պես, առանց դիմացս նայելու սկսեցի փախչել: Սկսվեց իսկական ցլավազքը: Ես ցուլից էի փախչում, որ փրկվեմ, նա վազում, հետապնդում էր ինձ իր արժանապատվությունը վիրավորելու համար: Եթե Աստված մի արասցե ոտքս մի բանի դիպչեր ու ընկնեի... Լսվեց անիվների ծանոթ, համաչափ ու ռիթմիկ դղրդոց, և ես հասկացա, որ գնացք է գալիս: Ցուլը հանկարծակիի գալով կանգ առավ, մի պահ շուրջը նայեց և հետ դարձավ: Բեռնատար շոգեքար-

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՇԱՑԱԾ ՍԿԻՉԲ	4
ԱՐՅՈՒՆՈՏ ՀՈՒՆՁՔ	7
ՀԱՅՐՍ	10
ՀՈՒՇԵՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ	
ԺԼԱՏ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ	12
ՀՅՈՒՐՆ ԱՍՏԾՈՒՆՆ Է	14
ՄԵՐ ԲՈՍՏԱՆԸ ՊԱՏՄԱՇԱՐԻՑ	
ՑԼԱՎԱՁՔ	16
ՓՇԱԼԱՐԵՐ, ՓՇԱԼԱՐԵՐ	18
ԱՐԴՅՈՔ ՍԻՐԱՀԱՐՎԵ՞Լ ԷՒ	21
ՋՈՒԼԻԵՏԸ	23
ԿԱՆՉԵ, ԿՈՌՆԿ, ԿԱՆՉԵ	25
ԵՍ ՁԻՆՎՈՐՆ ԵՄ ՀԱՎԱՏԻ	26
ՀԱՐՈՒԹՅԱՆ ԽԱՉՔԱՐ	28
ԽՆՁՈՐԵՆԻՍ	30
Ի՞ՆՉ ԵՂԱՎ ՄԱՐԴՈՒՆ	33
... ԵՎ ԾԱՌ ՏՆԿԻՐ	34
ԻՆՉՈՐԻ	35
ԽԱՉԱԼ ԱՄԻՍԸ	38
ԽՈՍՔԻ ՈՒԺԸ	41
ՊԱՏԱՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ	44
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	46

Աշոտ Մելիքյան
ԱՐԵՎԸ ՄԼԱՑՈՂՆԵՐԻՆ
(պատմվածքներ)

Ашот Меликян
СОЛНЦЕ ОСТАВШИМСЯ
(рассказы)

Խմբագիր՝ Անդրանիկ Կարապետյան
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի

Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.8 ծավալային կշիռով:
Ծավալը՝ 3 տպ. մամուլ:
Տառատեսակը՝ Ghabuzian Tigran
Տպաքանակը՝ 200:
Գինը պայմանագրային:



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru